Տարրական դպրոցի ուսուցիչների մրցույթին մասնակցելու հրավեր

Ընդհանուր տեղեկություններ

«Քայլ առ քայլ» Բարեգործական հիմնադրամը «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» միջազգային կոնսորցիումի հետ համատեղ իրականացնում է USAID-ի «Բոլոր երեխաները կարդում են» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող «Գնահատման գործիքներ տարրական դասարաններում գրաճանաչության արդյունավետ դասավանդման նպատակով» ծրագիրը (տեղեկատվական թերթիկը կցված է): Ծարգիրն իրականացվելու է 2012թ. հոկտեմբերից մինչև 2014թ. սեպտեմբեր ամիսը՝ նպատակ ունենալով հայերեն լեզվով մշակել և փորձարկել ընթերցանության գնահատման գործիքներ, որոնք կօգտագործվեն տարրական դպրոցի ուսուցիչների կողմից տարրական դասարաններում ընթերցանությունը ավելի հմտորեն և արդյունավետորեն դասավանդելու համար:

Ծրագրի խնդիրները.

ա/ մշակել և փորձարկել գնահատման գործիքներ՝ ավելի ճշգրիտ գնահատելու երեխաների գրաճանաչության կարողությունները և կարդալու մակարդակը,

բ/ մշակել և փորձարկել կրկնուսուցման ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն գնահատման արդյունքում ձեռք բերված տեղեկատվության վրա

գ/ տարածել բացահայտումներն ու գնահատման գործիքները՝ դրանք հատկացնելով Հայաստանում տարրական կրթության հարցերով զբաղվող անձանց և կազմակերպություններին:

Ծրագրի շրջանակներում «Քայլ առ քայլ» ԲՀ-ի կողմից ընտրվելու և վերապատրաստվելու է տարրական դպրոցի շուրջ 15 ուսուցիչ, ովքեր կվերապատրաստվեն և կմասնակցեն ինչպես գնահատման գործիքների մշակման, այնպես էլ դրանց փորձարկման աշխատանքներին:

Ծրագիրը կհրատարակի և մանկավարժներին կհատկացնի գրաճանաչության ոչ պաշտոնական գնահատման արժանահավատ գործիքներ, ինչպես նաև ուսուցիչների ձեռնարկ այն մասին, թե ինչպես կազմակերպել և անցկացնել կրկնուսուցում այն երեխաների հետ, որոնց կարդալու հմտությունները տվյալ դասարանի մակարդակից ցածր են: Մենք ծրագրի բացահայտումներն ու արդյունքները կներկայացնենք շահագրգիռ մարմիններին (մասնավորապես՝ ԿԳ նախարարություն, ԿԱԻ, մանկավարժական համալսարաններ և քոլեջներ): Ծրագրի ընթացքում մշակված ընթերցանության գնահատման և դասավանդման նյութերը հետագայում կարող են օգտագործվել Հայաստանի ողջ կրթական համակարգում՝ դառնալով տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման ուսումնական ծրագրերի մի մասը:

Ուսուցիչների համար նախատեսված աշխատանքները

Ընտրված ուսուցիչները 2013-2014թթ. միջև ընկած ժամանակահատվածում պետք է կատարեն հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել 4 հնգօրյա վերապատրաստումների (ընդամենը 20 օր), ինչպես նաև 3 մեկօրյա սեմինարների
   - տեղեկանալու համար, թե ինչպիսին են գրաճանաչության և սկզբնական ընթերցանության գնահատման վերաբերյալ ժամանակակից մոտեցումները,
   - իմանալու համար, թե գրաճանաչության ոչ պաշտոնական գնահատման ինչպիսի գործիքներ կան,
   - սովորելու համար, թե ինչպես կարելի է մշակել և կիրառել այդ գործիքները,
   - սովորելու համար, թե ինչպես կարելի է վերլուծել և օգտագործել գնահատման արդյունքները երեխաների կարդալու հմտությունների բարելավման նպատակով,
2. Մասնակցել գնահատման գործիքների մշակման գործընթացին

3. Փորձարկել գնահատման գործիքները իրենց բոլոր աշակերտների հետ
4. Մասնակցել կրկնուսուցման ընթացակարգերի մշակման գործընթացին
5. փորձարկել կրկնուսուցման ընթացակարգերը իրենց դասարանի 4-5 դժվար կարդացող երեխաների հետ
6. Կատարել սեփական փորձի վրա հիմնված գործնական առաջարկությունները գնահատման գործիքների վերջնական, վալիդացված տարբերակի մշակման համար
7. Իրենց սովորածը կիսել իրենց դպրոցի և համայնքի մյուս ուսուցիչների հետ

<u>Ուսուցիչներին ներկայացվող պահանջները</u>.

- Դիմորդները պետք է լինեն I-IV դասարաններում ներկայում դասավանդող ուսուցիչներ
- Դիմորդները պետք է ունենան տարրական դպրոցում դասավանդելու առնվազն երեք տարվա փորձ
- Դիմորդները պետք է կարողանան բացատրել և հիմնավորել իրենց հետաքրքրությունը առաջարկված թեմայի վերաբերյալ (այսինքն, գնահատման վրա հիմնված գրաճանաչության ուսուցում և վատ կարդացող աշակերտների կրկնուսուցում),
- Դիմորդները պետք է դրսևորեն շահագրգռվածություն իրենց բոլոր աշակերտների կարդալու հմտությունները բարելավելու հարցում
- Դիմորդները պետք է հաստատեն իրենց տնօրինության համաձայնությունը՝ ծրագրին իրենց հետագա մասնակցության վերաբերյալ
- Անգլերենի իմացությունը կդիտվի որպես առավելություն

Ուսուցիչների ընտրությունը կկատարվի երկու փուլով: Առաջին փուլի ընտրությունը կիրականացվի ըստ փաստաթղթերի, իսկ երկրորդ փուլ անցած մասնակիցների հետ կանցկացվի հարցազրույց (հեռավոր մարզերի դիմորդների հետ հարցազրույցը կարող է լինել՝ հեռախոսով): Վերջնարդյունքում ընտրված ուսուցիչները կտեղեկացվեն նամակով «Քայլ առ քայլ» ԲՀ աշխատակազմի կողմից:
Դիմորդներին խնդրում ենք մինչև 2013թ. հունվարի 25-ը «Քայլ առ քայլ» ԲՀ գրասենյակ ներկայացնել իրենց աշխատանքային և կենսագրական տվյալները (resume) և նպատակի հիմնավորումը:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ծրագրի համակարգող Աշխեն Գյուրջյանին հետևյալ հեռախոսահամարներով՝ (37410) 226996; 220442 կամ էլ. փոստով՝ ashkhen@sbsbf.am
Հասցեն՝ Երևան 0033, Գյուլբենկյան 31, բն. 20.